2013-2014 ուսումնական տարի

Ավագ դպրոց վարժարան

Ուսումնական պլան

Ուսումնական դասընթացներ	Տարեկան ժամաքանակ		
	X	XI	XII
Ընդհանուր			
Մայրենի խոսքի մշակույթ	72	72	-
Հայոցլեզու	-	-	136
Գրականություն	72	72	-
Հայ գրականություն	-	-	102
Մաթեմատիկա և ինֆորմատիկա	72	72	102
Բնագիտություն	-	-	68
Հայ ժողովրդի պատմություն	72	72	68
Փիլիսոփայություն	36	-	-
Տնտեսագիտություն	36	-	-
Իրավունք	-	36	-

Քաղաքագիտություն	-	36	-
Էկոլոգիա	72	72	-
Արվեստ	72	72	-
Անգլերեն	144	144	68
Ֆիզկուլտուրա և առողջ ապրելակերպ	108	108	68
ՆԶՊ և արտակարգ իրավիճակներ	36	36	-
Մասնագիտական կողմնորոշում	-	-	34
Ուսումնական-հասարակական նախագծեր	-	-	34
Առարկայական գնահատում և խորհրդատվություն	-	-	68
	792	792	748
Սովորողի ընտրությամբ			
Հայոց լեզու	72	72	-
Գրականություն	72	72	-
Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, ռուսերեն, վրացերեն, թուրքերեն, պարսկերեն)	144	144	-

Աշխարհագրություն	144	144	-
Ֆիզիկա	144	144	-
Քիմիա	144	144	-
Պատմություն	144	144	-
Կիրառական մաթեմատիկա	144	144	-
Կենսաբանություն	144	144	-
Կիրառական տնտեսագիտություն	72	72	-
Քաղաքագիտություն	72	72	-
Իրավագիտություն	72	72	-
Հոետորական արվեստ	72	72	-
Մշակութաբանություն	72	72	-
Գրաբար	72	72	-
Հոգեբանություն	72	72	-
Սոցիոլոգիա	72	72	-
Տեխնոլոգիա՝ այդ թվում մեդիա	72	72	-
Տե՛ս նաև Գեղարվեստի, Արհեստագործական ավագ դպրոցների ուսպլաններում ներկայացված			

ընտրությամբ դասընթացները			
Ակումբային գործունեություն			
Անգլիախոսների	144	144	144
Իրավապաշտպանի (խաղարկային դատարան)	144	144	144
Հայրենագետ-էկոլոգի	144	144	144
Գիտակների	144	144	144
«Տիեզերք»	144	144	144
TV MSKH և կինո-ֆոտոյի	144	144	144
Մարզական	144	144	144
«Ռոբոտիքս»	144	144	144
Տեխնիկական ստեղծագործության	144	144	144
Թատրոն	144	144	144
Գարդենիա	144	144	144
Ծեսերի կենտրոն	144	144	144
Երգչախումբ	144	144	144
Արվեստաբանի	144	144	144

Հնագետի	144	144	144
Մասնագիտական փորձառություն	-	-	34
Լրացուցիչ ուսուցում			
Հայոց լեզու և գրականություն	144	144	204
Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, ռուսերեն, վրացերեն, թուրքերեն, պարսկերեն)	144	144	204
Աշխարհագրություն	144	144	204
Ֆիզիկա	144	144	204
Քիմիա	144	144	204
Պատմություն	144	144	204
Կիրառական մաթեմատիկա	144	144	204
Կենսաբանություն	144	144	204
Տե՛ս նաև Գեղարվեստի, Արհեստագործական ավագ դպրոցների ուսպլաններում ներկայացված լրացուցիչ դասընթացները			
	432-648	**432-648**	**0-612**

Ուսումնական պլանի պարզաբանումներ

1. Ուսումնական պլանը «Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր. մեդիակրթություն» հեղինակային (պետական այլընտրանքային) կրթական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելվածն է:
2. 10-12-րդ դասարան սահմանված կարգով ընդունվում է հիմնական կրթություն ունեցող համապատասխան դասարանի սովորողը, ով ընդունում է Ծրագիրը, կատարում ընդունելության պահանջները և ծնողի (օրինական ներկայացուցիչի) հետ միասին, սահմանված կարգով, կնքում պայմանագիր ուսումնառության մասին:
3. Ընդհանուր հանրակրթության դասերը կազմակերպվում են 20-25 հոգիանոց խմբերով: Սովորողի ընտրությամբ գործունեության պարապմունքները կազմակերպվում են 12-15 հոգիանոց խմբերով: Կրթահամալիրի տնօրենի որոշմամբ կարող են գործել ավելի փոքրաքանակ խմբեր՝ կրթահամալիրի ոչ բյուջետային միջոցների հաշվին: Ուսուցման կազմակերպման մեջ սահմանված կարգով կիրառվում են առկա, հեռավար, առցանց, տնային ուսուցման ձևեր: Ակումբային գործունեությունը կազմակերպվում է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում ակումբային աշխատանքի կազմակերպման կարգին համապատասխան:
4. Ուսումնական պլանի պարզաբանումներում նշված կարգերը ուսումնական պլանի հավելվածն են: Դրանցում փոփոխությունները Ավագ դպրոց-վարժարանի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի տնօրենը:
5. Սովորողի առաջադիմությունը, ուսումնական արդյունքները, սովորողի մասին անհրաժեշտ այլ տեղեկություններ սահմանված կարգով էլեկտրոնային գրանցում են ստանում:
6. Ուսումնական տարին կազմակերպվում է կրթահամալիրի տարեկան ուսումնական օրացույցով: Դրանով որոշված ճամբարների, ուսումնական ստուգատեսների, Հանրակրթական դիջիթեքի, ծեսերի և տոների սահմանված կարգով մասնակցությունը պարտադիր ուսումնական աշխատանք է:
7. Ուսումնական շաբաթը 6-օրյա է: Շաբաթ օրերը հատկացվում են հայրենագիտական, ուսումնական ճամփորդությունները, ուսումնական-հասարակական նախագծերը, լրացուցիչ կրթության պարապմունքները կազմակերպելուն:
8. Ուսումնական օրը սկսվում է Ծրագրի 15 րոպե տևողությամբ առավոտյան ընդհանուր պարապմունքով՝ սահմանված կարգով և ծրագրով: Հանգստյան, տոնական, արձակուրդային օրերին ընդհանուր պարապմունքը կազմակերպվում է առցանց: Պարապմունքի կազմակերպումը սովորողների և դասավանդողների ուսումնական-հասարակական նախագիծ է:
9. Ուսուցումը կազմակերպվում է տանը և դպրոցում ուսուցողական թվային միջոցների կիրառմամբ: Սովորողը տանն ունի համացանցին միացած համակարգիչ: Ծրագիրը դպրոցում ապահովում է անլար ինտերնետից, համակարգչից, ձայնագրիչից, ֆոտոխցիկից ուսումնական նպատակներով անարգել օգտվելու հնարավորություն: Ուսումնական առաջադրանքները և դրանց պատասխանները ներկայացվում են էլեկտրոնային եղանակով:
10. Սովորողը և դասավանդողը կրթահամալիրի գրադարանի, այդ թվում՝

մեդիանյութերի և միջոցների բաժանորդն է: Գրադարանը սովորողին և ուսուցչին սահմանված կարգով տանը և դպրոցում ապահովում է անհրաժեշտ ուսումնական տպագիր և էլեկտրոնային նյութերով, միջոցներով:
11. Կրթահամալիրի, Ավագ դպրոց-վարժարանի կայքերին հետևելը և դրանց աշխատանքին մասնակցելը սովորողի պարտադիր ուսումնական աշխատանք է:
12. Ուսումնական պարապմունքների բացօթյա կազմակերպումը դիտվում է որպես սովորողի իրավունքների իրագործում:
13. Սահմանված կարգով իրականացվող ուսումնական ճամփորդությունները դասընթացների և մոդուլների բաղկացուցիչն են: Սովորողի մասնակցությունը այդ ճամփորդություններին պարտադիր ուսումնական աշխատանք է:
14. Էլեկտրոնային օրագրի, ուսումնական բլոգի վարումը սովորողի համար պարտադիր ուսումնական աշխատանք է:
15. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքով, տևական շրջան Հայաստանից բացակայած սովորողների համար կրթական ծրագիրը սահմանված կարգով կարող է կազմակերպվել անհատական ուսումնական պլանով ու ծրագրերով ուսուցում:
16. Սովորողը սահմանված կարգով մասնակցում է շրջապատի կամ նյութական միջավայրի բարելավմանն ուղղված նախագծերի իրականացմանը: Ուսումնական-հասարակական (քաղաքացիական կրթության) նախագծերը սահմանված կարգով իրականացվում են տարվա ընթացքում:
17. Սովորողը սահմանված կարգով մասնակցում է պարտադիր ինքնասպասարկմանը՝ հիգիենիկ պահանջների պահպանում, ուսումնական տարածքի և գույքի խնամք: Այդ աշխատանքը ուսումնական ծանրաբեռնվածության մաս չի կազմում:
18. Ընդհանուր դասընթացները՝ 22 ժամ շաբաթական ծանրաբեռնվածությամբ, պարտադիր են 10-12-րդ դասարանների բոլոր սովորողների համար:
19. 10-11-րդ դասարաններում սովորողը ընտրությամբ դասընթացներից (այդ թվում՝ Գեղարվեստի, Արհեստագործական ավագ դպրոցների ուսպլաններում ներկայացված), ակումբային գործունեությունից և լրացուցիչ ուսուցումից կազմում է իր անհատական ուսումնական պլանը՝ շաբաթական 12-18 ժամ ծանրաբեռնվածությամբ:12-րդ դասարանում սովորողը շաբաթական 22 ժամ ընդհանուր պարտադիր դասընթացից բացի կարող է ընտրել մինչև 18 ժամ ուսումնական ծանրաբեռնվածություն՝ ակումբային գործունեություն և լրացուցիչ ուսուցման դասընթացներ: Ակումբային գործունեությունը պարտադիր է:
21. 12-րդ դասարանում ընդհանուր պարտադիր դասընթացներն ուղղված են ավարտական քննությունների առարկայական նախապատրաստությանը:
22. Լրացուցիչ ուսուցումը ներառում է հայաստանյան, արտասահմանյան բուհի ընդունելության առարկայական նախապատրաստություն, այլ ուսուցում: Լրացուցիչ ուսուցման դասընթացների կազմակերպման համար 10-11-րդ դասարանում սովորողի (ծնողի) հետ կնքվում է լրացուցիչ կրթության պայմանագիր՝ որպես ուսումնառության պայմանագրի հավելված:

23. Անգլերենի ուսուցումը կազմակերպվում է ըստ սովորողի լեզվական կարողությունների մակարդակի:
24. Մասնագիտական կողմնորոշումը անցկացվում է դասընթացով՝ ուսումնական տարվա ընթացքում:
25. «Ֆիզկուլտուրա և առողջ ապրելակերպ» առարկան 10-11-րդ դասարաններում սովորողի ընտրած մարզաձևն է. սովորողը մասնակցում է թիմային պարապմունքներին: 12-րդ դասարանում կազմակերպվում է արշավներով կամ սպորտային պարերով. սովորողը կարող է ընտրել նաև մարզական ակումբային գործունեություն:
26. «ՆԶՊ և արտակարգ իրավիճակներ» առարկան կազմված է «Առաջին բուժօգնություն», «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներ», «Նախազորակոչիկի իրավունքներ և պարտականություններ», «Զինվորի այլ հմտություններ» դասընթացներից, որոնց ուսուցումը կազմակերպվում է ռազմա-մարզական ճամբարներում կամ հավաքներում:
27. Ուսումնական պլանի և ուսումնական ծրագրերի կատարողականն արտացոլվում է Ավագ դպրոց-վարժարանի ղեկավարի, դասավանդողների և սովորողների էլեկտրոնային օրագրերում, ուսումնական բլոգներում և սահմանված կարգով ներկայացվող էլեկտրոնային ամսական և կիսամյակային հաշվետվություններում:
28. Կիրառվում են գնահատման տարբեր ձևեր, որոնք բերվում են 10 միավորանոց համակարգի: Գնահատման հիմքում դրվում են սովորողի անհատապես և խմբով կատարած աշխատանքների թղթապանակը (այդ թվում՝ ինքնաստուգումներ, ընթացիկ և կիսամյակային ամփոփիչ ստուգումներ, հեռավար առաջադրանքների կատարում, հետազոտական-ստեղծագործական աշխատանք, ուսումնական կայքի աշխատանք, ուսումնա-հասարակական նախագծեր, ուսումնական ճամփորդություններ, հայրենագիտական արշավներ, ստեղծագործական ստուգատեսներին, հավաքներին, օլիմպիադաներին, այդ թվում՝ մեդիա, ցուցահանդեսներին, փառատոներին մասնակցություն), ամսական հաշվետվությունները: Սովորողի կատարած աշխատանքները, հաշվետվությունները տեղադրվում են սովորողի ուսումնական բլոգում: Կարող են գործել դասընթացի ծրագրով նախատեսված գնահատման այլ ձևեր: Խրախուսվում է սովորողի ուսումնական գործունեության ինքնահսկման և ինքնաստուգման ձևերի կիրառումը և արդյունքների հրապարակայնացումը մեդիայի միջոցով:
29. Սովորողի ստեղծած այլ տեսակի արդյունքները սահմանված կարգով ներկայացվում են ցուցադրություններում, ցուցահանդեսներում, ստեղծագործական հավաքներում:
30. 12-րդ դասարանի վերջում սովորողը հանձնում է ավարտական (միասնական) քննություններ՝ ԿԳ նախարարության սահմանած կարգով: